

պատուէրները շարադրող բարի, միամիտ մարդը:

**ՍՈՒՉՈՎԱՅԻ ՄԷՉ**

Սուչովան երկրորդ վառարանն է եղած ուսմանահայ հին դպրութիւն մտաւոր ճիւղերուն:

Անձանօթ է մեզի թէ ե՛րբ է հիմնուած առաջին հայ դպրոցը հոն: Հաւանաբար, աշխարհական դպրոցէ մը առաջ, հոգեւոր կըրթարան մը ունեցած է Սուչովան: Զամբայի վանքին մէջ, կը յիշատակէ Գրիգոր Կօյլավ առանց աղբիւրը մատնանշելու, գոյութիւն ունէր աստուածարանական դպրոց մը:

Բայց պէտք է անցնող դարուն սկիզբները գալ՝ նոր օրերու ըմբռնումով հայ դպրոց գտնելու համար Սուչովայի մէջ, ինչպէս առհասարակ ամէն տեղ: ԺՌ. դարու սկիզբն է որ հայ ժողովուրդը կը բռնկի լոյսի ծարաւով գրեթէ ամենուրեք:

Սուչովայի հայ եկեղեցւոյ ղիւանագիրքը պրպտած ատեն՝ աչքիս դարկաւ 1854-ի վերջերը գրուած հետեւեալ արձանագրութիւնը, որ կերպով մը կը ճշդէ Սուչովայի հայ դպրոցին սկիզբը.

«Մեր հայոց վարժարանը որ 1823-1824-ին քարաշէն շինուած էր յատկապէս լուսաւորչեան հայոց ազգային լեզուաւ ուսման սէպով (նպատակով), երեսուն տարիէն ետքը 1854 Հոկտ. 25-ին կայսերական զօրաց հիւնադանոց եղաւ. իսկ հողարարձութիւնը ուսանող աշակերտաց համար մասնաւոր տան մը մէջ վարժարանը հաստատեց 4 ամիսի չափ»:

Բայց 1823-էն առաջ ալ Սուչովան անշուշտ իր հայ դպրոցը ունէր. սակայն որեւէ մանրամասնութիւն գտնել կարելի չեղաւ այդ նախնական շրջանին մասին:

Գիտենք միայն որ Սուչովայի հայ դըպրոցին ամենէն տեւական սիւնը եղած է Աստուածատուր Ռամաշքան վարժապետը: Սուչովայի հայ եկեղեցւոյ ղիւանատան մէջ 1863-ին իր մէկ արձանագրութեան տակ կ'ըսէ թէ «զըրեաց Ածատուր Ռամաշքան իրեն վարժապետութեան քառասուներեքում տարեներ մէջ»: Ուրեմն 1820-ին սկսած է ան ուսուցչութիւն ընել: 1866-ին դեռ պաշտօնի վրայ է: Կէս դարու մօտ կը թակահար ծառայած այս հա-

մեստ վաստակաւորը Սուչովացին մինչեւ այսօր կը յիշէ, եւ արդար է որ պատմութիւնն ալ արձանագրէ դանիկա:

Պահ մը, Սուչովայի դպրոցը, տեսած է խանդավառ ճիւղեր: Կ'արժէ այդ պահը պատմել, որովհետեւ անոր հերոսն է հայ կեանքի մէջ յետոյ աւելի մեծ դեր խաղացող անձնաւորութիւն մը:

Սուչովայի մէջ գտայ 1850 Մարտ 31-ին կնքուած պայմանագրութիւն մը, ուր կ'ըսուի.

«... Մինչդեռ ազգը ուրիշ կողմերը հրակայական քայլերով կը զարգանար կը յառաջանար ուսման մէջ, Պոլիս, Զմիւռնիա, Անգլիանուպոլիս եւ Հայաստանի շատ կողմերը զարատունները երթալով կը ծաղկէին, մեր քաղաքը, մեր դպրոցը օր քան զօր վար կը մընար, առանց յուսոյ եղանակաւ մը նորոգելու: Ասոր ճարը գտնելու համար շատ միջոցներ մտածելէն եւ շատ խորհուրդ ընելէն ետքը, հաստատեցինք Վիեննա Միխիթարեան Սը. Հարց վանքը գրելու որ մեզի երկու վարժապետ խրկեն: Յաւեցանք թղթերնուս եւ ո՛չ պատասխանը առնելու վրայ, բայց աւելի եւս՝ որ աս միջոցն ալ՝ որ միմիայն դարման մեր տղոց ուսումնական կը թուութեանը կը համարէինք ընդունայն եղաւ: Այսպէս յուսակորոյս՝ յոյսներնիս կտրած՝ սմբած դամ օր քան զօր ազգին եւ դպրոցին ետ երթալը տեսնելով տրտմած կը կենայինք. մէյմնալ մէկէն ի մէկ յանկարծ անակնկալ ուրախութեան ձայն մը բոլոր քաղքիս մէջ փոռեցաւ. իմացանք որ Ադն. Ածատուր Ս. Զունդեան գիտուն եւ ազնուարարոյ պատանին, մեր քաղաքակիցը եւ համազգին որ 12 տարի անուանի եւ ազգօգուտ Վիեննայու վանքը նստած ուսման եւ գիտութեան զբաղած էր՝ մեր մէջն է: Ասի Աստուծոյ բարութիւն մը մասնաւանդ Աստուծմէ խրկուած Մովսէս մը համարելով որ իր համազգիներուն առաջնորդէ եւ կը թէ ուսման եւ գիտութեան մէջ, ամէնքնիս ալ միաբանած, իրեն առաջարկեցինք աղաչեցինք որ հաճի յանձն առնուլ մեր դպրատան վարժապետ ըլլալու եւ իր քաղաքակիցները լուսաւորելու: Յաւեցանք արդարեւ մեծ ցաւով իրեն հրաժարվելու պատասխանը լսելով...: Բայց այսպիսի գիտուն